Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-181-20.12.2012,29.01.2013-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ պարբերություններում «40» թիվը փոխարինել «50» թվով:

Հոդված 2. Օրենքի 33-րդ հոդվածում՝

1. 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) անձն ունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող՝ սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունք:».

2. 8-րդ մասը «կարգը» բառից հետո լրացնել «, իսկ սույն հոդվածի 7-րդ մասի 4-րդ կետում նշված դեպքում՝ նաև կենսաթոշակի տեսակը փոխելու նրա իրավունքի և դրա իրականացման կարգի վերաբերյալ» բառերով:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածում.

1. 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն, կենսաթոշակի վճարումը շարունակելու համար, պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, նախորդ տարվա ընթացքում բանկ ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում գտնվելու մասին:

Կենսաթոշակառուի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար վճարված կենսաթոշակի գումարը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:»,

2. *9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«9. Կենսաթոշակը նաև վճարվում է կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով կենսաթոշակ վճարելու մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում:»,

3. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ մասերով.

«10. Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է նաև տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով:

11. Կենսաթոշակը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝ սկսած կենսաթոշակը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը:

12. Լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվանից հետո կենսաթոշակը տվյալ լիազորագրով չի վճարվում:

13. Կենսաթոշակ վճարելը լիազորագրով չի վերսկսվում, բացառությամբ այն դեպքի, երբ կենսաթոշակառուն պատիժը կրում է քրեակատարողական հիմնարկում կամ բուժվում է հոգեբուժական հաստատությունում:

14. Կենսաթոշակ վճարելը լիազորագրով դադարեցվում է (լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում).

1) սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալու դեպքում,

2) կենսաթոշակառուի գրավոր դիմելու դեպքում:»:

Հոդված 4 Օրենքի 36-րդ հոդվածում.

1. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կենսաթոշակ վճարելը վերսկսելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը լիազորագրով չի վճարվում, բացառությամբ անձի (կենսաթոշակառուի)՝ քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելու, հոգեբուժական հաստատությունում բուժվելու կամ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձի կենսաթոշակի գործն ուղարկելու դեպքերի:».

2. 5-րդ մասում «Չվճարված կենսաթոշակի գումարը» բառերը փոխարինել «Կենսաթոշակ վճարելը դադարեցնելու դեպքում՝ չվճարված կենսաթոշակի գումարը» բառերով:

Հոդված 5. Օրենքի 38-րդ հոդվածում.

1. 1-ին մասի 2-րդ կետում «վերահաշվարկելուց» բառերը փոխարինել «կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց» բառերով, իսկ 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) կենսաթոշակառուն ներկայացրել է մինչև կենսաթոշակ նշանակելը (կենսաթոշակի տեսակը փոխելը) ընկած ժամանակահատվածում իր կամ մահացած կերակրողի աշխատանքային կամ մինչև տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքն ընկած ժամանակահատվածի այլ գործունեության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից,».

2. 4-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող երեխայի կամ առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող զավակի մյուս ծնողը մահանալու դեպքում՝ նրա մահվան օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:»:

Հոդված 6. Օրենքի 41-րդ հոդվածում.

1. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ կետով.

«15) անձին սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) կենսաթոշակ նշանակված լինելու դեպքում:»,

2. 1-ին մասի 2-րդ պարբերությունը «ամսվա 1-ից» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» բառերով,

3. 1-ին մասը 2-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ պարբերությունով.

«Սույն մասի 2-րդ կետում նշված դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ անձը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերել *սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետով սահմանված հիմքով՝ հաշմանդամ ճանաչվելու կամ հաշմանդամ*

ծնողներ կամ զավակներ ունենալու հետևանքով, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է հաշմանդամության ժամկետը լրանալու օրվանից:»,

4. 2-րդ մասը երկրորդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ կետով.

«2.1) եթե կենսաթոշակը վճարվում է լիազորագրով (ներկայացվել է կենսաթոշակը լիազորագրով վճարելու դիմում)՝ լիազորագրի գործողության ժամկետը լրանալու, կամ կենսաթոշակը տասներկու ամիս անընդմեջ լիազորագրով վճարելու, կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուամսյա ժամկետը լրանալու դեպքում.»,

5. 2-րդ մասի երրորդ կետում «փաստաթուղթ չներկայացնելու կամ հայտարարություն չտալու» բառերը փոխարինել «հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու)» բառերով,

6. 4-րդ մասի 1-ին կետում «2-րդ կետի» բառերը փոխարինել «2-րդ և 2.1-րդ կետերի» բառերով, իսկ կետը «դիմելու» բառից հետո լրացնել «(անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունն ստացվելու)» բառերով,

7. 4-րդ մասի երրորդ կետում «փաստաթուղթը ներկայացնելու կամ հայտարարությունը տալու» բառերը փոխարինել «հայտարարությունն ստորագրելու (բանկ ներկայանալու)» բառերով:

Հոդված 7. Օրենքի 43-րդ հոդվածում.

1. վերնագիրը «կատարելը» բառից հետո լրացնել «, ավել վճարված կենսաթոշակի գումարը բռնագանձելը» բառերով.

2. 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև կենսաթոշակառուի՝ սույն օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով կամ սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) նրան ավել վճարված գումարները հետ գանձելու մասին կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման որոշման և կենսաթոշակառուի գրավոր համաձայնության հիման վրա, սակայն նշանակված կենսաթոշակի 15 տոկոսից ոչ ավելի, եթե ավել վճարված կենսաթոշակի գումարի չափը չի գերազանցում որոշումը կայացնելու ամսվան հաջորդող ամսվա կենսաթոշակի գումարի կրկնապատիկը:».

3. 2-րդ մասում «վճարվելիք» բառը փոխարինել «վճարվող» բառով.

4. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Կենսաթոշակառուի համաձայնության բացակայության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ ավել վճարված կենսաթոշակի գումարի չափը գերազանցում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափը՝ ավել վճարված կենսաթոշակի գումարները բռնագանձվում են դատական կարգով, լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներկայացրած հայցի հիման վրա:

5. Կենսաթոշակից կատարվող պահումների չափը համամասնորեն փոխվում է կենսաթոշակի չափը փոխվելու դեպքում:»:

Հոդված 8. Օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասում «մահվան վկայականը տվել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը» բառերը փոխարինել «կենսաթոշակառուն մահացել է Հայաստանի Հանրապետությունում» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ *օրը*:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից դադարեցվում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքով սահմանված կարգով կայացրած որոշման հիման վրա կենսաթոշակից պահումները կատարելը:

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում ավել վճարված կենսաթոշակի գումարները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կենսաթոշակ նշանակող

ստորաբաժանման որոշման հիման վրա պահվել չեն կարող: Այդ գումարները կարող են բռնագանձվել միայն դատական կարգով՝ անկախ ավել վճարված գումարի չափից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից վերահաշվարկվում են կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակները:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի կապակցությամբ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող լրացման տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<4) անձը ստանում է Հայաստանի Հարապետության պետական բյուջեից ֆինանսավորվող՝ սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված այլ կենսաթոշակ>>:	Չի ընդունվել:	Նախագծով առաջարկվող ձևակերպումը բխում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասից:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվող <<4) 9-րդ մասի չորրորդ պարբերությունում <<կենսաթոշակ չվճարված>> բառերը փոխարինել <<դիմելու ամսվան հաջորդող >> բառերով>> տեքստը հանել:	Ընդունվել է:	Դրույթը հստակեցվել է և շարադրվել է նոր խմբագրությամբ (ներկայացվող տարբերակում՝ 3-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվող 11-րդ մասը):
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող 4-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<4. Կենսաթոշակը վճարելը վերսկսելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ սկսած կենսաթոշակը դադարեցնելու ամսվանից:	Չի ընդունվել:	Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Առաջարկությունը չի բխում օրենքի հիշյալ դրույթից:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ	Առաջարկում ենք օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փոփոխությունը հանել: Հստակեցնել գործող օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված՝ կենսաթոշակը վերահաշվարկելու դրույթները:	Ընդունվել է:	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հստակեցնելով կենսաթոշակը վերահաշվարկելու պայմաններն ու կարգը:

/077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/			
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվող լրացումը հստակեցնել:	Ընդունվել է:	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվող լրացումը հստակեցվել է:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ պարբերության վերջին <<Այդ գումարները կարող են բռնագանձվել միայն դատական կարգով՝ անկախ ավել վճարված գումարի չափից:>> նախադասությունը փոխարինել հետևյալ նախադասությամբ. <<Լիազոր մարմինը սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-օրյա ժամկետում զանգվածային լրատվամիջոցների միջոցով տեղեկացնում է՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն ավել վճարված կենսաթոշակի գումարները չբռնագանձելու մասին:>>	Չի ընդունվել:	Լիազոր մարմինը կիրականացնի հանրային իրազեկման աշխատանքներ, որի համար օրենքով պարտականություն սահմանելն անհրաժեշտ չէ:
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ Խ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ /128 ընտրատարածք/ Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ Վ.ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ Ռ.ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք/	Ելնելով նրանից, որ օրենքի նախագծի լրամշակված տարբերակը մշակվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N ՍԴՈ-1061 որոշման հիման վրա՝ Առաջարկում ենք օրենքի նախագծի անցումային դրույթներում սահմանել՝ ՀՀ օրենսդրությամբ հաշվառված անձանց նկատմամբ սույն օրենքի դրույթները ուժի մեջ մտնելուց հետո 6 ամիս հետո կիրառելու մասին դրույթ:	Ընդունվել է ի գիտություն:	ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N ՍԴՈ-1061 որոշման համաձայն՝ չվճարված կենսաթոշակի գումարը 3 տարվա փոխարեն մեկ տարվա ժամանակահատվածի համար վճարելու դրույթը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հյուպատոսական հաշվառման կանգնած անձանց նկատմամբ չէր կարող կիրառվել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100-Ն օրենքն ընդունվելուց հետո 6 ամսվա ընթացքում, իսկ առաջարկվող տարբերակում նախատեսվում է 6-ամսյա ժամկետը հաշվարկել ներկայացվող նախագիծն ընդունելուց: Միաժամանակ, ՀՀ ՍԴ որոշման կիրարկումը կրում է մեկանգամյա բնույթ, և խնդրի օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն չկա:

ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածում 1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «2) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «9. Կենսաթոշակը նաև վճարվում է կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով կենսաթոշակ վճարելու մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում:»: 2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ մասերով. «10. Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է նաև տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով: 11. Կենսաթոշակի գումարը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածի համար՝ սկսած կենսաթոշակը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը: 12. Լիազորագիրը տալու հաջորդող տասներկուերորդ ամսից հետո կենսաթոշակի գումարը տվյալ լիազորագրով չի վճարվում: 13. Կենսաթոշակ վճարելը լիազորագրով չի վերսկսվում, բացառությամբ այն դեպքի, երբ կենսաթոշակառուն պատիժը կրում է քրեակատարողական հիմնարկում կամ բուժվում է հոգեբուժական հաստատությունում: 14. Կենսաթոշակ վճարելը լիազորագրով դադարեցվում է (լիազորագրով չի վճարվում). 1) սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալու դեպքում, 2) կենսաթոշակառուի գրավոր դիմելու դեպքում:»: 3) հանել 4-րդ և 5-րդ կետերը:	Ընդունվել է:	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ: Հստակեցվել են կենսաթոշակը լիազորագրով վճարելու պայմաններն ու կարգը:
ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածում «օրվանից» բառը փոխարինել «օրը» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:	Ընդունվել է:	Նախագիծը խմբագրվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի հոդվածների մասերի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:	Ընդունվել է:	Նախագծի հոդվածների մասերի համարակալումը համապատասխանեցվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին: